

8067

3K172(47925)

R-24

1 DEC 2009

24 SEP 2006

3KП2(47.925)

Պրոֆեսորներ քոլոջ յնվերնների, միացն'ը

2-24

**ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ(Բ)Կ-Ի
9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱԶԵՎԸ**

**ՀԿ(Բ)Կ-Ի ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԱԶՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ**

**БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Российской Академии
СССР**

3KП2(47.925)
2-24

ԿՈՒՍՀՐԱՏ

1 9 3 4

ՅԵՐԵՎԱՆ

17 SEP 2013

8067

34-И
ОА 549

ВНЕШНЕСТРАННЫЕ
ИНСТИТУТЫ
МОСКОВСКОГО
ДИПЛОМАТИЧЕСКОГО
УНИВЕРСИТЕТА
СССР

Резолюция 9-го съезда КП(б)А
по отчетному докладу
ЦК КП(б)А

Партиздат ЦК КП(б)А
Э р и в а н ь 1934

Handwritten notes and stamps in purple ink, including the word "АТЧАНТОН" and other illegible markings.

Սերագրի Մ. Մաղյան
Շաբելու հանձնվեց՝ 28 հունվարի 1934 թ.
Տպել բուլլետենի 1, փետրվարի 1934 թ.
Պատվեր № 38
Տիւրաձ 5,000 բլրի 3/8 բերք, տպագր. 3/4 բերք.
44,000 տպագր. ճամբ. Հրատ. № 171. Փլավլիս № 7815(բ)

ԿՈՒՍՏՐՈՒՄԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

Քննարկելով ընկ. ԽանՋյանի հաղիստու ղեկուցու-
մը, Հայաստանի Կոմկուսի (բ) 9-րդ համագումարը
լիովին հավանութուն է տալիս ՀԿ (բ) Կ Կենտկոմի
քաղաքական գծին և գործնական աշխատանքին:

Հայաստանի Կոմկուսի 9-րդ համագումարը հանձ-
նարարում է Կենտկոմին իր հետագա աշխատանքում
յեղնել Համ Կ(բ)Կ-ի 17-րդ համագումարի վորոշումներին,
կենտրոնացնելով Հայաստանի բոլոր կուսակազմա-
կերպությունների ուշադրությունը սոցիալիստական
շինարարության հետևյալ հիմնական խնդիրների վրա.—
Կոլտնտեսային ակտիվը դեռ բավականաչափ չի զին-
ված հեղափոխական զգաստությամբ, բավականաչափ
ուժեղ պայքար չի մղում կոլտնտեսային գործի միա-
սարարների դեմ, յենթակուլակների, լողըրների և
կոլտնտեսային գույքը հափշտակողների դեմ, կուլա-
կության մնացորդների և կոլտնտեսության մեջ նրանց
ունեցած ազդեցության դեմ:

Դեռ վոչ բոլոր կոլտնտեսություններում է, վոր
ուշադրության կենտրոնն են դարձել բերքաավությունն
ավիլացնելու, գյուղատնտեսական աշխատանքների
վորակը բարձրացնելու և պետության հանդեպ ստանձ-
նած պարտավորությունները կատարելու առաջնակարգ
խնդիրները:


Դրա հետ միասին, համագումարը մասնանշում է,
վոր Հայաստանի շրջանների մեծ մասի կուսակազմ-

կերպությունները բավուրար աշխատանք չեն կատարում աշխատավոր մենատնտեսների լավագույն մասը կոլտնտեսություններ ներգրավելու ուղղությամբ, և հանձնարարում ե կենտկոմին ու կուսկազմակերպություններին՝ վերացնել մի շարք շրջաններում նկատվող արհեստական խոչընդոտները, նոր անդամներին կոլտնտեսություն ընդունելու բնագավառում և բոլոր շրջանների գյուղի աշխատավորների լայն խավերում ծավալելով մասսայական-քաղաքական աշխատանք, կազմակերպել և բարձրացնել կոլեկտիվացման նոր առողջ ալիք:

Համագումարը պարտավորեցնում է ՀԿ (բ) Կ-ի կենտկոմին՝ ծավալել Հայաստանի բոլոր կուսկազմակերպությունների պայքարը, վճարբար վերացնելու կոլտնտեսային շինարարության գործում վերև մասնանշված բոլոր թերությունները, լայն ճակատով առաջ տանելով կոլտնտեսությունները՝ դրանք բոլշևիկյան կոլտնտեսություններ դարձնելու ուղիով և արդեն ընթացիկ տարում հասցնել Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսությունը նոր, ավելի բարձր տնտեսական, քաղաքական այնպիսի մակարդակի, վորը համապատասխանում է անդասակարգ հասարակություն կառուցելու հնգամյակի վիթխարի խնդիրներին:

Ս.ՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Ամրացնելով Հայաստանի ինդուստրացման գործում ձեռք բերված հաջողությունները, ապահովել արդյունաբերական հողաշինարարության հետագա ծա-



վալումը և դրա հետ միասին՝ նորակառույց ձեռնարկությունների ճիշտ շահագործումը:

Մասնավորապես համագումարը հանձնարարում է կենտկոմին՝

ա) ամեն կերպ արագացնել Բանաքեռի հիդրոէլեկտրակայանի, սինթետիկ կաուչուկի գործարանի, քիմիական կոմբինատի և ցեմենտի գործարանի հետագա շինարարության ու սարքավորման տեմպը, ապահովել այդ կարևորագույն ձեռնարկությունների գործարկված ցեխերի լիակատար յուրացումը և մյուս ցեխերի գործարկումը սահմանված ժամկետներին.

բ) 1934 թվականին ավարտել Լենինականի մսի կոմբինատի, Յերևանի բազալտաձուլական գործարանի, Ալլահվերդու պղնձարջուտայի ու աղաթթվի գործարանների ու արտացոլիչ հնոցի շինարարությունը, Ղափանի ֆլոտացիոն գործարանի, Յերևանի սննդի կոմբինատի, փայտամշակման գործարանի և ծխախոտագործարանի, ինչպես և Շաքիի ու Մեղրու հիդրոէլեկտրակայանների շինարարությունը.

գ) ապահովել նոր մանվածքային գործարանի շինարարության ծավալումը Լենինականում:

2. Առանձնապես մատնանշելով Հայաստանի պղնձարդյունաբերության անրավարար աշխատանքը, համագումարը լիովին հավանություն է տալիս ՀԿ (բ) Կ-ի կենտկոմի և Հայաստանի Ժողովուրդի 1933 թվի դեկտ. 3-ի վորոշման մեջ ուրվագծված գործնական ձեռնարկումներին՝ պղնձարդյունաբերության գործարան բարելավման ու հետագա զարգացման սպարեղում և հանձնարարում է կենտրոնական

Կոմիտեյին ու բոլոր կուսակազմակերպություններին՝ ապահովել այդ ձեռնարկուհների բոլորիկյան իրականացումը: Մասնավորապես համագումարը Կենտկոմի ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, զոր անհրաժեշտ է 1934 թվականին առավելագույն չափով ծավալել հետախուզական աշխատանքներն Ագարակի պղնձի ու մոլիբդենի հանքավայրերում:

3. 1934 թվականին, համեմատած 1933 թ. հետ, ավելացնել Հայաստանի ամբողջ արդյունաբերությունը ընդհանուր արտադրանքը 32,5 տոկոսով:

4. Ընդարձակել շինանյութերի արտադրությունը 50 տոկոսով, համեմատած 1933 թ. հետ:

5. Ապահովել տեղական արդյունաբերության ծավալումը բոլոր շրջաններում, մասնավորապես Յերեվանի ու Լենինականի տեղական արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճումը 4 անգամ՝ համեմատած 1933 թ. հետ:

6. Ամեն կերպ ծավալել տնայնագործական-արհեստագործական կոոպերացիայի աշխատանքը, ապահովելով 1934 թվականին Հայաստանի ընդհանուր արտադրանքի աճը 37,5 տոկոսով, համեմատած նախորդ տարվա հետ:

7. Համ Կ(բ) Կ-ի Կենտկոմի 1933 թ. դեկտեմբերի 23-ի դիրեկտիվների իրականացման հիման վրա, վրձնաբար բարելավել Հայաստանի բոլոր սննդի ձեռնարկությունների աշխատանքը, նրանց բարձրորակ արտադրանքն ապահովելու համար:

8. Համագումարն անհրաժեշտ է գտնում 1934 թվականին Հայաստանի կազմակերպություններին

ների ուշադրություն կենտրոնում դնել աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման, խոտանի վերացման խնդիրները, արդյունաբերության ամբողջ արտադրանքի վորակն ու առտորտիմենտը վճռաբար բարելավելու խնդիրը: Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը 1934 թվականին պետք է բարձրանա առնվազն 13,5 տոկոսով՝ համեմատած 1933 թվականի տարեկան միջին արտադրողականության հետ:

Արդյունաբերության արտադրանքի ինքնարժեքը պետք է իջեցվի առնվազն 4,7 տոկոսով՝ համեմատած 1933 թվականի տարեկան միջին մակարդակի հետ, իսկ գուտ շինարարության ինքնարժեքը՝ 15 տոկոսով:

9. Ընկ. Ստալինի 6 պայմանների լիակատար կենսագործման, բանվորական ամենալայն մասսաների աշխատանքային խանդավառության ու ակտիվության նոր, հզոր վերելքի, սոցիալիզմի ու հարվածայնության հետագա ծավալման հիման վրա, Հայաստանի կուսակազմակերպությունները 1934 թվականին պետք է ապահովեն վճռական բեկում ամբողջ արդյունաբերության և շինարարության աշխատանքի վորակի բնագավառում և միջոցներ ձեռք առնեն լրիվ կատարելու արգֆինպլանների թե՛ քանակական և թե՛ վորակական ցուցանիշները:

1934 թվականը պետք է հանդիսանա նոր ձեռնարկությունների և նոր տեխնիկայի խորը, լուրջ ու բազմակողմանի յուրացման տարի:



56616-66

1. Համագումարը Հայաստանի կուսակցական կազմակերպությունների առաջ խնդիր է դնում՝ ել ավելի ամրացնել կոլտնտեսությունները կազմակերպորեն ու անտեսապես և ավելի ուժեղացնել նրանց աճումը, ուժեղացնել ՄՏԿ-ները, խորհրտնտեսությունները, գյուղի կուսակցական կազմակերպություններն ու գյուղխորհուրդները և զրա հիման վրա ստանալ ավելի բարձր վորակական ու քանակական ցուցանիշներ, Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ու զարգացման գործում:

2. Բամբակային տնտեսության հետագա ամրացումն ու վերելքը առաջվա նման մնում է ՀԿ(բ)Կ-ի Կենտկոմի և բամբակացան շրջանների կուսկազմակերպությունների կարևորագույն խնդիրը:

Ամրացնել 1933 թվականի բամբակի կամպանիայի ժամանակ ձեռք բերված հաջողությունները և առաջավոր կոլտնտեսությունների և լավագույն հարվածային կոլտնտեսականների աշխատանքի փորձը փոխադրել բոլոր կոլտնտեսությունները, վերջնականապես ջախջախել կուլակության մնացորդները, մարտական շարժման մեջ դնել բոլշևիկյան աշխատանքի բոլոր լծակները և 1934 թվականին բարձրացնել բամբակի բերքատվությունը մինչև 8 ցենտների մի հեկտարից, — այս է ՀԿ(բ)Կ-ի Կենտկոմի և բամբակացան շրջանների կուսկազմակերպությունների խնդիրն ընթացիկ տարում:

Համագումարը հանձնարարում է Կենտկոմին՝ ապահովել ցանքափոխությունների ճիշտ արմատացումն

ըստ ուղղագծած ծրագրի բամբակացան շրջաններում, ապահովել 1934 թվականին բամբակի բարձրորակ ցանքը և բարձրորակ մշակումը 18 հազար հեկտար տարածության վրա:

3. Շեշտելով առաջիկա գարնանացանի կամպանիայի վճռական նշանակությունը գյուղատնտեսության հետագա բարձրացման և կոլտնտեսությունների ամրացման համար, համագումարը պարտավորեցնում է Կենտկոմին՝ բոլոր շրջաններում անհապաղ ծավալել այդ կարևորագույն կամպանիայի նախապարաստական աշխատանքը և ապահովել Կենտկոմի ու ժողովխորհի հաստատած ցանքի պլանի բոլշևիկյան կատարումը:

Բերքատվությունը բարձրացնելու համար մզվող պայքարը 1934 թվականին ես պետք է կազմի Հայաստանի բոլոր կուսկազմակերպությունների, բոլոր ՄՏԿ-ների, խորհրտնտեսությունների, կոլտնտեսությունների ու գյուղխորհուրդների ուշադրության կենտրոնը:

4. Վճռաբար առաջ մղել տխնիկական ու հատուկ մշակույթների զարգացումը (բամբակ, ծխախոտ, խաղող, մետաքս, այգեկործություն, շաքարի ճակնդեղ, վուշ և այլն), նվազագույն չտփով անգամ չթուլացնելով հացահատիկային մշակույթների բերքատվության հետագա բարձրացման համար մզվող պայքարը:

Վերջին տարին խաղողարուծությունը, ծխախոտագործությունը և շերամապահությունը բարձրացնելու գործում տեղի ունեցած միջանի տեղաշարժերն արդյունք են միայն այն առաջին քայլերի, վորոնք կատարվել են Համ Կ(բ)Կ-ի Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի այդ մշակույթների առավելագույն

զարգացման վերաբերյալ դիրեկտիվները կատարելու ուղղութեամբ: Համադրւածաբար հանձնարարուած է ՀԿ(Բ)Կ-ի կենտկոմին՝ 1934 թ. աշխատանքի ծրագրուած ուղղագծել հասուկ ձեռնարկումներ՝ ապահովելու Հայաստանի խաղողաբուծութեան ու մրգաբուծութեան ասիլի արագ զարգացումը:

5. Չնայած վերջին տարին անասնաբուծական խորհրտեսուծութուններու և կոլտնտեսային ֆերմաներու տեղի ունեցած վորոշ տեղաշարժերին, անասնաբուծութունն ամբողջովին վերցրած՝ դեռ հանդիսանում է Հայաստանի գյուղատնտեսութեան հետ մնացող ճյուղը:

Համադրւածաբար Հայաստանի ամբողջ կոմկուսի առաջ կարևորագուէն խնդիր է դնում՝ վճռական միջոցառումներով ապահովել ընթացիկ տարուած անասնաբուծական տնտեսութեան կտրուկ վերելքը և դուրս բերել Հայաստանի սոցիալիստական անասնաբուծութունը հետագա աճման ու ամրացման լայն ճանապարհը: Իրա համար անհրաժեշտ է անասնաբուծութեան ասպարեղուած ուժեղացնել յուրաքանչյուր շրջանի, յուրաքանչյուր ՄՏԿ-ի ու խորհրտեսուծութեան քաղբաժնի, յուրաքանչյուր կոլտնտեսութեան ու գյուղ-խորհրդի ոպերատիվ աշխատանքը: Խորհրտեսուծային և կոլտնտեսային անասնաբուծութունը պետք է կենտրոնական տեղ գրավի Հայաստանի բոլոր կուսկազմակերպութունների աշխատանքում:

1934 թվականը պետք է դառնա մի տարի, յիւր ծավալուն իսկական բողոքիկյան պայքար է մղվելու բոլոր կոլտնտեսութուններում, խորհրտեսուծութուն-

ներում ու գյուղերում, անասունների թիֆը ավելացնելու և նրանց խնամքը լարելովելու համար, հատուկ ուշադրութուն նվիրելով ջահել անասունների մեծացմանը, պայքար կերի բազան ընդարձակելու և ամրացնելու համար, անասունների մթերատվութունը բարձրացնելու, ամլութունը նվազեցնելու, անհատական հատվածում անասունների վատնումն արմատախիլ անելու, սոցիալիստական անասնաբուծութեան տեխնիկան յուրացնելու համար:

1934 թվականի ընթացքում վերացնել անասունների եպիզոտիկ հիվանդութունների տարածման բոլոր բները, բարելավելով անասնաբուծական սպասարկումը:

1934 թվականին չպետք է մնա վոճ՝ մի կոլտնտեսական, վորը չունենա կով, մանր անասուն և թռչուն անձնական ոգտագործման համար:

6. Մեքենատրակտորային կայանները, մանավանդ բաւբակացան շրջանների ՄՏԿ-ները, վերջին տարին զգալիորեն բարելավեցին իրենց աշխատանքը: Սակայն դեռ շատ թերութուններ կան նրանց աշխատանքում:

Կոլեկտիվացման կազմակերպական ու տնտեսական հետագա ամրացման և աճման խնդիրները պահանջում են խոշոր բեկուած ստեղծել կոլտնտեսութունների ազրոնոմիկ սպասարկման ասպարեղում ՄՏԿ-ների կատարած աշխատանքում, մանավանդ հողի մշակման վորակի զծով, ցանքափոխութունն արմատացնելու բնագլովառում, նորոգման վորակի, մոլախոտերի վորընչացման, պարարտանյութի գործածման, ջրային

տնտեսութեան բարելավման և սոցիալիստական դաշտերի բերքատուութեան բարձրացման ասպարեզներում:

ՄՏԿ-ների քաղբաժինների աշխատանքի փորձը ցույց ափեց, վոր հանձինս նրանց ստեղծվել են ամենաուժեղ լծակներ այն աշխատանքի համար, վորը կատարում է կուսակցութունը՝ գյուղատնտեսութունը սոցիալիստական վերակառուցման յենթարկելու, կորտնտեսութունները կազմակերպորեն, տնտեսապես ու քաղաքականապես ամրացնելու, կորտնտեսական մասսաներին սոցիալիստական դաստիարակութուն տալու բնագավառներում:

ՄՏԿ-ների քաղբաժինների, ինչպես և խորհանտեսութունների քաղբաժինների խնդիրն է՝ ել ավելի համառ պայքար մղել Համ Կ(բ)Կ-ի Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարի պլենումի վորոշումները բոլշևիկորեն իրականացնելու համար:

7. Շնորհիվ բոլշևիկյան այն պայքարի, վոր մղել է Հայաստանի կոմկուսը Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարութեամբ՝ Համ Կ(բ)Կ-ի Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարի պլենումի վորոշումները և ընկ. Ստալինի ցուցումներն իրականացնելու համար, տեղի ունեցավ կորտնտեսականի շրջապարձը դեպի կորտնտեսային արտադրութունը, փոխվեց նրա վերաբերմունքը հանրային սեփականութեան հանդեպ: Հայաստանի կորտնտեսութուններն առաջին լուրջ քայլն արեցին դեպի ունևոր կորտնտեսային կյանքը: Կորտնտեսութունները բոլշևիկյան կորտնտեսութունների վերածելու, նրանց յեկամտաբերութունն ավելացնելու, աշխորի արժեքը բարձրացնելու, մշտական արտադրա-

կան բրիգադն ամրացնելու և կարգապահութունը բարձրացնելու ուղղութեամբ՝ առկա յեն հաջողութունները: Ստեղծված են բոլոր պայմանները՝ կորտնտեսութուններն անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցման հնգամյակի խնդիրներին մակարդակին բարձրացնելու համար:

Դրա հետ միասին, համագումարն արձանագրում է, վոր Հայաստանում, մասնավորապես Բաւարգեշարի, Մարտունու, Ախսայի, Մար-Բայագեշի և Աբարաճի շրջաններում կան շատ կորտնտեսութուններ, վորոնք առայժմ դեռ լիովին չեն ամրացել՝ աշխատանքը վատ կազմակերպելու և սոցիալիստական խոշոր տնտեսութեան առավելութունները վատ ոգտագործելու պատճառով: Հայաստանում դեռ շատ կան լուրջ թերութուններ կորտնտեսային շինարարութեան գործում:

ԱՇԵԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԿՈՒՏՈՒՐՈՒԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Հաշվեսու շրջանում արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան զարգացման, արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրութեան մեջ աշխատանքի արտադրականութեան բարձրացման հիման վրա զգալիորեն բարձրացավ բանվորների, կորտնտեսականների և քաղաքի ու գյուղի աշխատավորների նյութական և կուլտուրական-կենցաղային մակարդակը:

Դրա հետ միաժամանակ նախադրյալներ ստեղծվեցին Հայաստանի բանվորների ու աշխատավորների նյութական բարեկեցութեան բարելավման և կուլտուրական մակարդակի բարձրացման հետագա ավելի արագ տեմպի համար:

1934 թվականին անհրաժեշտ է կիրառել հետեւ-
վյալ ձեռնարկումները.

1. Հիմնական ներդրումների ծավալը կոմունալ շինարարութեան գծով ավելացնել մինչև 16.689 հազար ռուբլու, իսկ բնակարանային շինարարութեան գծով (առանց արդյունաբերութեան բնակշինարարութեան)՝ մինչև 6.444 հազար ռուբլու: Վճարար բարելավել աշխատավորների կոմունալ ապաստարկումը, առաջին հերթին Յերևանում և Լենինականում: Քաղաքների հետագա բարեկարգման աշխատանքի ծավալման հետ միասին, լայն ձեռնարկումներ կիրառել նաև շրջանային կենտրոնների ու խոշոր գյուղերի բարեկարգման ասպարեզում:

Անհրաժեշտ է առավելագույն չափով բարձրացնել տեղական կազմակերպութեանների և իրենց մասսաների ինքնագործունեությունն ու նախաձեռնությունը՝ կենցաղային պայմանների բարելավման—քաղաքի ու գյուղի բարեկարգման, սանիտարական ձեռնարկումների կիրառման և այլ բնագավառներում:

Կուսակցական կազմակերպությունները պետք է իրենց անմիջական հսկողութեան տակ առնեն կուլտուր-կենցաղային և կոմունալ ձեռնարկությունների աշխատանքը, վճարար բարելավեն նրանց վիճակը և հասցնեն նրանց աշխատանքը սոցիալիստական տնտեսութեան պահանջների մակարդակին:

2. Առողջապահութեան հիմնարկների՝ հիվանդանոցների, բուժարանների և այլ հիմնարկների ցանցի ընդարձակման հետ միասին բարելավել գործող բուժական հիմնարկների աշխատանքի վորակը և ամրացնել նրանց նյութական բազան (սպիտակեղենի, ինվեն-

տարի, դեղերի, սննդամթերքի, մահճակալների մատակարարումը և այլն):

Հիվանդանոցային շինարարութեան հետագա ծավալումը, բուժական գործի դրվածքի վճռական բարելավումը, մուրներրի ցանցի ընդարձակումն ու նրանց աշխատանքի բարելավումը, սանիտարական նախազուշական ձեռնարկումների ավելի լայն կիրառումը—սրանք են առողջապահութեան ասպարեզում ծառայած այն հիմնական ինդեքսները, վորոնք պետք է իրագործվեն 1934 թվականին:

Մասնանշելով այն տեղաշարժը, վորը տեղի յի ունեցել Հայաստանի թե գործող բուժավայրերի և թե նոր բուժավայրային հարստութեանների ուղղմանս իրման գիտահետազոտական բազայի կազմակերպման գործում, համագումարն անհրաժեշտ է համարում ուժեղացնել գործող բուժավայրերի ու հանգստյան տների ընդարձակման, ինչպես և բուժավայրային նոր ուսուցիչների հայտաբերման աշխատանքը և 1934 թվականից սկսել Արզնու, Դիլիջանի ու Ղարաքիլիսայի բարեկարգման աշխատանքները:

Յնելով յերկրորդ հնգամյակի վերջում մալարիան վերացնելու ինդեքսից, համագումարը հանձնարարում է կենտկոմին՝ ապահովել 1934 թվականին մալարիայի դեմ պայքարելու ձեռնարկումների ծավալումն կիրառումը, առաջին հերթին բամբակացան շրջաններում, հատուկ ուշադրութեան նվիրելով ջրատեխնիկական աշխատանքներին,

3. Վճարար բարելավել ապրանք տարածող կազմակերպությունների աշխատանքը, կենտրոնացնելով նրանց ուշադրութեանը բանվորների ու գյուղացիների

հարաճուճ պահանջները վրա, ապրանքներ վորակի վրա, վերջնականապես վերացնել ապրանքը մեքենայորեն բաշխելու սխտեմը, վերացնել ավելորդ ողակներն ապրանքի տարածման գործում, բարելավել ասորիմենտը և վերջինս համապատասխան դարձնել քաղաքային ու գյուղական ադգարնակության առանձին խավերի պահանջներին, իջեցնել մանրածախ գները, ավելացնել ապրանքների քանակն ի հաշիվ լայն սպտուման ապրանքների տեղական արտադրության և անշեղորին իրականացնել գների խորհրդային քաղաքականությունը:

Ընդամին պետք է վճարար վերացվին հերթերն ու հակասանխտարական դրությունը խանութներում՝ ու հացի կրպակներում և պետք է ապահովվեն բոլոր պայմանները կուլտուրական խորհրդային առևտրի համար:

Համագումարն առանձնապես նշում է, վոր Հայաստանում թույլ է ծավալվում կոլտնտեսային առևտուրը, վորը կարևորագույն ազդեցություն է քաղաքի ու գյուղի աշխատավորների մատակարարումը բարելավելու համար, վոր անբավարար է կոլտնտեսային շուկաների վիճակը: Անհրաժեշտ է այդ ասպարեղում վճռական բեկում ստեղծել, միջոցներ ձեռք առնել՝ լայն ծավալելու կոլտնտեսային առևտուրը, կազմակերպելով արդյունաբերական ապրանքների ասորտիմենտի համապատասխան հոսանք՝ կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների կողմից շուկա բերվող գյուղատնտեսական մթերքների դիմաց:

Աշխատավորների նյութական մակարդակը բարձրացնելու խնդիրը պահանջում է ել ավելի ընդարձակել հանրային սննդի ձեռնարկությունների ցանցը: Յեղ այստեղ վորակի հարցերը պետք է առանձնապես սուր կերպով դրվեն ընթացիկ տարում: Խստիվ պահանջներ սանխտարայի և առողջապահության պահանջ-

ները բոլոր ճաշարաններում ու բուֆետներում, բարելավել բաց թողնվող ճաշերի վորակը, ուշադիր քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել հաճախորդներին. այս խնդիրները պետք է լուծվեն ինչ գնով էլ լինի:

4. 1934 թվականին ավարտել անդրազիտության վերացումը:

5. Մասնանշելով դպրոցական ցանցի ընդարձակման և ուսումնական հաստատությունների աշխատանքի բարելավման ասպարեղում ձեռք բերված անվիճելի հաջողությունները, հանձնարարել կենտկոմին՝ լայն ձեռնարկումներ կիրառել 1934 թվականին՝ ուժեղացնելու դպրոցական շինարարության տեմպը շրջաններում, մանավանդ ու նախ և առաջ ազգային փոքրամասնությունների շրջաններում:

6. Մինչև 1935 թվականի վերջն իրագործել յոթնամյա պարտադիր ուսուցումը:

7. 1934 թվականին արմատական բեկում ստեղծել գյուղի քաղուսվարական սպասարկման գործում, լայն ծավալելով գյուղում ազդիոցանցը, յեռապատկելով շրջիկ կինոների թիվը, կրկնապատկելով կոլտնտեսային ակումբների թիվը: Ապահովել ազրոտեխնիկական պրոպագանդի ծավալումը գյուղում և բարելավել գրականության մատակարարումը գյուղին:

8. Համագումարը հանձնարարում է կենտկոմին՝ վճարար բարելավել զիտահտազոտական աշխատանքի դրվածքը Հայաստանում, բարձրացնել կադրերի պատրաստման վորակը, ավելի բարձր աստիճանի հասցնել ուսման վորակը ԲՈՒՀ-երում և տեխնիկումներում, բարելավել դասատուների և ուսանողների նյութական կենցաղային պայմանները:

Համագումարն անհրաժեշտ է գտնում վճռական բեկում ստեղծել Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի, Գյուղատնտեսության նստավայրի և Կոլտնտեսության վերակառուց-



ման ինստիտուտի և այլ ինստիտուտների գործունե-
յության մեջ, դարձնելով նրանց ուշադրության կեն-
տրոնը սոցիալիստական շինարարության հրատապ հար-
ցերը մշակելու և մարքսիստական լենինյան միթոզով
լուսաբանելու խնդիրը:

9. Մասնանշելով պրոլետարիատին թշնամի իզո-
լոգիայի տարրերի գոյությունը զրականության և ար-
վեստի ասպարեզում, մասնավորապես նացիոնալիստա-
կան տենդենցների գոյությունը զրականության մեջ,
համագումարը շեշտում է, վոր անհրաժեշտ է կուլտու-
րական շինարարության բոլոր ասպարեզներում ուժե-
ղացնել կոնկրետ պայքարը մեծապետական շովինիզմի
և տեղական, հայկական նացիոնալիզմի դեմ, աջ և
«ձախ» ոպորտունիզմի բոլոր արտահայտությունների
դեմ:

10. Բարձրացնել կինոարդյունաբերության վորա-
կական ցուցանիշները և ավելի արագորեն սոաջ տա-
նել յերկրի կինոֆիկացիան, էլ ավելի բարձրացնել
խորհրդային թատրոնական արվեստը, ուշադրություն
դարձնելով ինքնուրույն հեղափոխական ռեպրտուարի
զարգացման վրա, էլ ավելի զարգացնել մասսաների
յերաժշտական սպասարկումը և նոր բարձունքների
հասցնել խորհրդային նկարչությունը:

11. Համագումարը հանձնարարում է կենտկոմին՝
1934 թվականին ապահովել Հայաստանի պոլիգրաֆիկ
բազայի լայնացումը, մարքսիզմ-լենինիզմի կրասիկ-
ների աշխատությունների հրատարակման անմպի ու-
ժեղացումը, ապահովելով նրանց թարգմանության
բարձր վորակը, միջոցներ ձեռք առնել հրատարակելու
լենինի գրվածքների վեցհատորյակի մնացած յերեք
հատորները հայերեն, Ստալինի «Լենինիզմի հարցերի»
յերկրորդ հրատարակությունը և խորհրդային հայկա-
կան հանրագիտարանի առաջին հատորը:

12. Համագումարը Հայաստանի կուսկազմակեր-
պությունների հատուկ ուշադրությունն է հրավիրում,
վոր 1934 թվականին անհրաժեշտ է առավելագույն
չափով ծավալել կուլտուրական աշխատանքն ազգա-
յին փոքրամասնությունների շրջաններում, ուժեղաց-
նել պայքարն ազգային փոքրամասնությունների կուլ-
տուրական կարիքների ու պահանջների անտեսման
դեմ, վոր ըստ էյության հանդիսանում է հայկական
նացիոնալիզմի արտահայտությունը:

1. Համագումարը հանձնարարում է կենտկոմին՝
ճանապարհային շինարարության ասպարեզում 1934
թվին ապահովել հետևյալ ձեռնարկումների կիրառումը.

ա) Հուդրոնացնել 110 կիլոմետր յերկարությամբ
ճանապարհ՝ Յերևան — Ղամարու, Յերևան — Վա-
ղարշապատ, Յերևան — Յելենովկա և Ղարաքիլիսա—
Վարդանյու ճանապարհները:

բ) Կառուցել Մեղշու, Թայշարուխի, Այրումի և
Սարալի կամուրջները:

գ) Կառուցել Յերևան—Բաջառնի ճանապարհը՝
29 կիլոմետր յերկարությամբ:

2. Համագումարը մասնանշում է, վոր ջնայած
կապի որգանների աշխատանքում վորոշ տեղաշարժեր
են կատարվել վերջին ժամանակներս, այնուամենայնիվ
այդ աշխատանքն զգալիորեն հեռ է մնում Հայաստա-
նի ժողովրդական անտեսության զարգացման հարա-
ձուն պահանջներից: Համագումարը պարտավորեցնում
է Հայաստանի բոլոր կուսկազմակերպություններին և
կապի ժողկոմատի Հայաստանի լիազորությանը՝ վրճ-
ոաբար բարելավել ընթացիկ տարում կապի աշխա-
տանքը (հեռագիր, հեռախոս, ոսդիո, փոստ, մամու-
լի տարածում և այլն): Մասնավորապես համագու-
մարը հանձնարարում է կենտկոմին՝ 1934 թվականին
ապահովել հետևյալ ձեռնարկումների կիրառումը:

ա) Հիմնականում ավարտել ազգային փոքրամասնությունների և սահմանամերձ շրջանների հեռախոսավորումը:

բ) Շրջանային բոլոր կենտրոնները միացնել Յերևանի հետ յերկգիծ հեռախոսային կապով:

գ) Հիմնել փոստային ուղղակի հաղորդակցություն Յերևան—Քեշիշքենդ—Միսիան—Գորիս, Յերևան—Վաղարշապատ—Աշտարակ—Աբարա՛ն և Յերևան—Ախտա—Բայազետ—Մարտունի— 1 սասրգեհչար գծերով:

3. Համագումարը մատնանշում է, Վոր յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարվա խնդիրները հաջողությամբ իրագործելու հիմնական պայմանն է՝ հեղափոխական մարտունակության հետագա ամրացումն ու բարձրացումը կուսակցական-խորհրդային կազմակերպությունների բոլոր ողակներում, մանավանդ գյուղում:

Համագումարը հանձնարարում է կենտկոմին՝ շարունակել անդուլ աշխատանք կատարել՝ ել ավելի ամրացնելու շրջանը, գյուղը, կոլտնտեսությունը, ստորին կուսակցական-խորհրդային ողակն ստուգված աշխատողներով՝ բարձրացնելու գյուղական ակտիվի քաղաքական գրագիտությունը, ստեղծելու գյուղում, կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում ամրակուռ, քաղաքականապես կայուն, մարտունակ կուսակցական բջիջներ, բարձրացնելու գյուղական կոմունիստներին յերկրորդ հնգամյակի խնդիրների մակարդակին:

4. Նոր խնդիրներն ավելի բարձր պահանջներ են դնում կուսակցության ամենամոտ ողակներին՝ լինի-

նյան կոմյերիտիության առաջ: Կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի վորակը բարձրացնելու խնդիրը պահանջում է արմատապես բարելավել կոմյերիտիության կուսակցական ղեկավարումը, ավելի հոգատարություն ցուցաբերել կոմյերիտականների քաղաքական դաստիարակությանը:

5. Անշտի բարձրացել է գյուղխորհուրդների դերը կուսակցության և կառավարության ղերեկտիվներն իրագործելու ասպարեղում, բարձրացել է նրանց տնտեսական-քաղաքական նշանակությունը: 1934 թ. խնդիրները պահանջում են ել ավելի բարելավել Հայաստանի գյուղխորհուրդների աշխատանքը, բարձրացնել նրանց դերը վորպես որգաններ, վորոնք կազմակերպում են կոլտնտեսական մասսաներին և աշխատավոր մեծատնտեսներին՝ կատարելու կուսակցության ու կառավարության ձեռնարկումները՝ կոլտնտեսություններն ամրացնելու, գյուղատնտեսական ապրանքները մթերելու, գյուղատնտեսական կամպանիաներն անցկացնելու, բերքատվությունը բարձրացնելու, գյուղը բարեկարգելու ասպարեղում և այլն:

6. Համագումարը հանձնարարում է կենտկոմին՝ ուժեղացնել բանվորուհիների, կոլտնտեսուհիների և աշխատավոր կանանց կուլուրական-լուսավորական, կենցաղային ու քաղաքական դաստիարակություն տալու աշխատանքը, ձեռնարկումներ կիրառել ավելի լայն ներգրավելու նրանց արտադրության մեջ և ակտիվացնելու նրանց մանակցությունը սոցիալիստական շինարարությամբ:

Համագումարը Հայաստանի բոլոր կուսկազմա-

կերպությունների հատուկ ուշադրությունն է հրավիրում, վոր անհրաժեշտ է խիստ բեկում ստեղծել ազգային փոքրամասնությունների կուլտուրական-կենցաղային սպասարկման ասպարեզում, վճռաբար բարելավել կուսակցական-խորհրդային ապաբառի աշխատանքն ազգային փոքրամասնությունների շրջաններում և սահմանամերձ շրջաններում, վոր անհրաժեշտ է այդ շրջաններում կիրառել հատուկ ձեռնարկումներ՝ ստեղծելու և ամրացնելու կուսակցական, կոմյերիտական, կուլտուրական և խորհրդային ակտիվ տեղական ազգություններից:

8. Գյուղի աշխատանքի բարելավման պայքարը 1934 թվականի համար ևս մնում է վորպես Հայաստանի Կոմկուսի կենտրոնական խնդիրը:

1934 թվականը պետք է դառնա բարձրորակ աշխատանքի տարի սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզներում: Ծավալուն բուլճերիկյան ինքնաքննադատության հիման վրա, կոմունիստների ամենալայն մասսաների աշխատանքային ու քաղաքական ակտիվության նոր, հզոր վերելքի հիման վրա, քաղաքի ու գյուղի կոմունիստների, կոմյերիտականների, բանվորների, կուլտուրականների, աշխատավորների ամենալայն խավերի աշխատանքային քաղաքական ակտիվության նոր, հզոր վերելքի հիման վրա, Հայաստանի բուլճերիկները, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀամԿ(բ)Կ-ի Անդրյերկոմի անմիջական ղեկավարությամբ, ավելի սերտորեն համախմբվելով մեր կուսակցության լենինյան շտաբի՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի շուրջը, վորին

գլխավորում է մեծ առաջնորդ ու ուսուցիչ ընկ. Ստալինը, կամրացնեն իրենց նվաճած դիրքերը և կտանեն յերկիրը դեպի նորանոր հաղթանակներ, հանուն յերկրորդ հնգամյակի մեծ խնդիրները՝ իրականացման:

Համագումարը խորապես համոզված է, վոր Հայաստանի Կոմունիստական (բուլճերիկներ) կուսակցությունը, ՀամԿ(բ)Կ-ի հավատարիմ ջոկատը, շարունակելով անողոք պայքար մղել աջ թեքման դեմ, վորը շարունակում է մնալ վորպես գլխավոր վտանգ, «ձախ» խոտորումների դեմ, վերջնականապես ջախջախելով դասակարգային թշնամու, կուլակության ու դաշնակների մնացորդները և անշեղորեն իրականացնելով լենինյան ազգային քաղաքականությունը, կապահովել կուսակցության 17-րդ պատմական համագումարի բոլոր վորոշումների բուլճերիկյան իրականացումը:

Սուանց թուլացնելու պայքարը մեծապետական շովինիզմի, վորպես տվյալ ետապի գլխավոր վտանգի դեմ, անհրաժեշտ է առանձնապես բևեռել կուսկազմակերպությունների ուշադրությունը տեղական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի վրա:

«Սոցիալիստական շինարարության ներկա շրջանը բնորոշվում է խնդիրները ավելի բարդացումով, դեկավարությանը ներկայացվող պահանջների ավելի բարձրացումով: Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները՝ կապիտալիստական տարբերին վերջնականապես վերացնելը, կապիտալիզմի մնացորդները հաղթանարումն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, ժողովրդական ամբողջ տնտեսության՝ տեխնիկական նոր բազայի վրա կառավարող վերակա-

34-11
UA 549

նուցման ավարտուժը, նոր տեխնիկայի և նոր ձեռ-
նարկութիւնների յուրացումը, գյուղատնտեսութիւն
մեքենայացումը և նրա արդյունավետութիւն բարձրա-
ցումը, ամենասուր կերպով դնում են բոլոր ասպարեզ-
ներում աշխատանքի վտակը, առաջին հերթին կազ-
մակերպական գործնական դեկալտորիան վտակը
բարձրացնելու հարցը» (ընկ. Կազանովիչի ղեկուցման՝
Համկ(բ)Կ-ի 17-րդ համագումարին առաջադրված թե-
զերեց):

Համագումարը հաստատապէս համոզված է, վոր
Հայաստանի բոլշեիկները պատվով կկատարեն նաև
այդ խնդիրը, անդուլ պայքար մղելով խմբակայնու-
թիւն բոլոր արտահայտութիւնների դեմ, բոլշեի-
կյան կուսակցականութիւն համար, իրենց շարքերի
կարգապահութիւն, կայունութիւն համար, կոմու-
նիստների զաղափարական-քաղաքական մակարդակը
և հեղափոխական զգաստութիւնն ել ավելի բարձ-
րացնելու համար, աշխատանքի վորակը բոլոր կենտ-
րոնական ու տեղական կուսակցական, խորհրդային,
կոմյերիտական ու արհմիութենական կազմակերպու-
թիւններում վճուար բարելավելու համար, Համա-
միութենական կոմունիստական կուսակցութիւն (բոլ-
շեիկների) 17-րդ համագումարի վորոշումների կեն-
սադրման հիման վրա:



